ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> 03 2013թ. N: 63-Ա **ք.Գյումրի**

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՄՐԱՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ 8Ա ՇԵՆՔԻ ԹԻՎ 48 ԲՆԱԿԱՐԱՆԻ 10.9 ՔՄ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԵԿ ՍԵՆՅԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան 8ա շենքի՝ որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1952546 վկայականը, հաշվի առնելով Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունվարի 31-ի թիվ 58 որոշումը, ղեկավարվելով <<Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 4-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի <<Աղետի գոտու վերականգման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի բաշխման և 1999թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին>> թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի <<բ>> ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի <<Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին>> թիվ 116 որոշման 2-րդ կետի դրույթներով, ի կատարումն թիվ ՎԴ5/0379/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի օրինական ուժի մեջ մտած որոշման.

Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված և Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունվարի 31-ի թիվ 58 որոշմամբ հատկացված Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան 8ա շենքի թիվ 48 բնակարանի 10.9 քմ բնակմակերեսով մեկ սենյակը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ պայմանագիր կնքել Հասմիկ Թևանի Առաքելյանի հետ:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է